ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹՎԱՔԱՆԱԿԸ XVIII ԴԱՐՈՒՄ

ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Արևելյան Վրաստանի ազգաբնակչության քանակի, ազգային կազմի և տեղաբաշխման լուսաբանման համար կարևոր աղբյուր է 1770 թ. ապրիլի 5-ի թվակիր ցուցակը: Այդ ցուցակում Արևելյան Վրաստանի ազգաբնակչության ընդհանուր ծխային քանակը ներկայացված է ըստ մարզերի և քաղաքների: Գավառական ազգաբնակչությունը նշված ցուցակում տարորոշված է նաև էթնիկական առումով, իսկ քաղաքի բնակչության թվական քանակը ըստ էթնիկական պատկանելության չի խմբավորված:

Պրոֆ. Ա. Ցագարելին, որն այդ ցուցակը առաջինն է գիտական շրջանառության մեջ դրել, գրել է. «Հարկ կա՞ արդյոք ավելացնելու, որ վերը բերված վիճակագրական տեղեկությունները հեռու են լիակատար և անվերապահ ճշգրիտ լինելուց, սակայն նույնիսկ այդ տեսքով դրանք խիստ ուսանելի են»[1]:

Թեև նշված ցուցակում «չի արտացոլված արտոնյալ դասը (արքունիքը, ազնվականությունը, հոգևորականությունը) ամբողջապես կամ գոնե դրա մեծ մասը»[2], այդուհանդերձ ցուցակում բերված թվերը հնարավորություն են տալիս մոտավոր պատկերացում կազմելու Քարթլ-Կախեթի գյուղերում և քաղաքներում բնակվող հայերի քանակի մասին: Չնայած, ինչպես ասվեց, նշված ցուցակում քաղաքների ազգաբնակչությունը չի տարորոշված ըստ էթնիկական կազմի, սակայն այլ աղբյուրներից հայտնի է, որ Տփղիսի 4000 ծուխ բնակչությունից 2500-ը հայկական էր, այսինքն կազմում էր քաղաքի բնակչության 72 տոկոսից ավելին: «Թբիլիսիում կա մոտ 20000 բնակիչ, որից 14000-ը հայեր են, 3000-ը՝ մահմեդականներ, 2000-ը վրացիներ և 500-ը հայ կաթոլիկներ»[3],– գրում է ֆրանսիացի բուսաբան Տուրնեֆորը, որը Լյուդովիկոս XIV-ի հանձնարարությամբ 1700 թ. ճանապարհորդել է Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, եղել է նաև Վրաստանում: Հայ ազգաբնակչությունը ոչ միայն Տփղիսում, այլև Արևելյան Վրաստանի այլ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում գերակշիռ մեծամասնություն էր կազմում. «Հայերը գործունեության հա-

---

1 А. Цагарели. Новые архивные материалы для истории Грузии XVIII столетия. – Журнал Министерства народного просвещения, январь, 1883, с. 131.

2 ვ. გამრეკელი, ზ. ცქიტიშვილი. 1770 წ. 5 აპრილის დემოგრაფიული ნუსხა.– «მაცნე» ისტორიის, არქეოლოგიის, ეთნოგრაფიისა და ხელოვნების ისტორიის სერია. 1973, №1, გვ. 151.

3 М. Полиевктов и Г. Натадзе. Старый Тифлис. Тифлис, 1929.

տուկ ոլորտ ունեին, նրանք էին կազմում Վրաստանի trers-etat-ը (երրորդ դասը), որին վրացիներից միայն առանձին անհատներ էին պատկանում»[4]: Պրոֆեսոր Ա. Խախանովի կարծիքը զալիս է հավաստելու մեր վերը հայտնած միտքը:

Բերենք 1821 թ. անցկացված մարդահամարի տվյալներով Արևելյան Վրաստանի քաղաքների ազգաբնակչության էթնիկական կազմն ըստ ծխերի.

	վրացիներ ռուսներ	հայեր
Թիֆլիս	417	2951
Գորի	121	331
Անանուր	24	123
Թելավ	74	236
Աղնախ	12	377[5]

Վիճակագրական տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ Արևելյան Վրաստանի քաղաքային բնակչության թվական փոխհարաբերությունը XVIII դարի ընթացքում ևս մոտավորապես նույնն է եղել, տարբերությունը միայն այն պետք է լիներ, որ XVIII դարում Վրաստանում ռուս ազգաբնակչություն չկար, հետևաբար հայերի տոկոսային ցուցանիշը ավելի բարձր էր:

Այս ամենը նկատի ունենալով կարելի է պնդել, որ 1770 թ. ապրիլի 5-ի ցուցակում նշված Արևելյան Վրաստանի քաղաքային բնակչության 70 տոկոսը կազմում էին հայերը, հետևաբար մենք կստանանք 4500 ծխից ավելի քաղաքային հայ ազգաբնակչություն: Եթե ըստ ընդունված կարգի, յուրաքանչյուր ծուխը 5 անձից հաշվենք, ապա կստանանք մոտ 22500 մարդ: Իսկ եթե տյս թվին ավելացնենք նաև Քարթլիի և Կախեթի գյուղերի հայ բնակչության մոտ 1000 ծուխը, որը մոտ 5000 մարդ կկազմի, ապա կարելի է ենթադրել որ XVIII դարում Քարթլ-Կախեթում բնակվում էր շուրջ 27–28 հազար հայ:

Այժմ տեսնենք, թե այդ թիվը Վրաստանի ազգաբնակչության քանի տոկոսն էր կազմում: Ըստ պրոֆեսոր Աբ. Կիկվիձեի, Ռուսաստանին միակցելուց առաջ Քարթլ-Կախեթը պիտի ունենար մոտավորապես 380 հազար բնակիչ, Իմերեթի թագավորությունը՝ 200 հազար, Մենգրելիան և Գուրիան՝ 120 հազար բնակիչ, ընդամենը՝ 700 հազար: Պրոֆեսոր Պ. Գուգուշվիլու կարծիքով, Վրաստանի ողջ ազգաբնակչության թիվը 600 հազար պիտի լիներ, Ֆ. Մախարաձեի կարծիքով, որի հետ համերաշխում է նաև պրոֆ. Գ. Խաչապուրիձեն, Վրաստանի ամբողջ ազգաբնակչության

4 А. С. Х а х а н о в. Положение армян в грузинском царстве. — Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1897, с. 659.

5 Ա. Ե ր ի ց յ ա ն. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում. մասն Ա, Թիֆլիզ, 1894, էջ 139:

թիվը պիտի հավասար լիներ 431 հազարի[6]: Ըստ պրոֆ. Ս. Կակարաձեի, 1770-ական թվականներին այդ թիվը մոտավորապես 500000 պիտի կազմեր: Իսկ Քարթլ-Կախեթի մասին նա գրում է. «1770 թվականի տեղեկության համաձայն, օրինակ, Քարթլ-Կախեթի թագավորությունում, առանց Ղազախի գավառի, կար, 37 1/3 հազար ծուխ՝ որից 52,8 տոկոսը վրացի, 19 տոկոսը հայ, 17 տոկոսը թաթար, 10,9 տոկոսը օս և այլն: Սրանից զատ Ղազախ–Շամշադինում, որը 1749 թ. միակցվեց թագավորությանը, կար 5200 ծուխ թաթար և 2400 ծուխ հայ»[7]: Ըստ կապիտան Յազիկովի՝ 1770-ական թվականներին Քարթլիում կար 100 հազար շնչից պակաս, Կախեթում դրանից ավելի[8]: «1770 թվականի վավերագրի համաձայն Քարթլ-Կախեթում, ներառյալ Թուշեթին և Փշավ-Խեվսուրեթին, ինչպես և Ղազախ-Շամշադինը և Փամբակը՝ կար 42000 ծուխ: Վիճակագրության մեջ ընդունված կարգի համաձայն շնչերի քանակը հաշվելու համար ծխերի քանակը եթե բազմապատկենք հինգով, կստանանք, որ Քարթլ-Կախեթում 1770 թվականին 210000 մարդ է բնակվել»[9]: Այս տվյալները կրկին գալիս են հավաստելու պրոֆ. Ս. Կակարաձեի կարծիքի ճշմարտության մոտ լինելը, երբ նա Քարթլ-Կախեթի հայ ազգաբնակչությունը համարում է ողջ թագավորության բնակչության գրեթե մեկ հինգերորդը: Ներսես Աշտարակեցու Վրաստանում թեմական առաջնորդ եղած տարիների (1814–1828 թթ.) վերաբերյալ մի վավերագրից պարզվում է, որ Թիֆլիսում եղել է 2331 հայ ընտանիք կամ 14532 շունչ, Թիֆլիսի գավառում 704 ընտանիք (4432 շունչ), Թելավում և գավառում 990 ընտանիք (5233 շունչ), Սղնախի, Գորու, Դուշեթի գավառներում, ներառյալ նաև նշված քաղաքների հայ ազգաբնակչությունը՝ 3467 ընտանիք (21316 շունչ), Իմերեթում՝ 149 ընտանիք (895 շունչ)[10]: Այստեղ բացակայում է Ախալքալաքի և Ախլցխայի գավառների հայ ազգաբնակչության թիվը, որովհետև այդ հաշվումները Ն. Աշտարակեցին կատարել է նախքան նշված գավառները ռուսական տիրապետության տակ անցնելը, ուստի և վերը նշված թվերը չնչին տարբերությամբ Վրաստանի XVIII դարի հայ ազգաբնակչության քանակի ճիշտ արտացոլումն են, քանզի բնական աճն այդ ժամանակ կես տոկոս էր կազմում:

Արդ տեսնենք, թե որքան էր հայերի ընդհանուր թիվը և այն Վրաստանի XVIII դարի ողջ ազգաբնակչության ո՞ր տոկոսն էր կազմում: Հայության թիվը XIX դարի տասական թվականներին կազմել է 46408 մարդ, որը կազմում է XVIII դարի Վրաստանի ազգաբնակչության 10 տոկոսը, գուցե ավելի քիչ: Այսպիսով, տարբեր հետազոտողներ Վրաստանի ամբողջ ազգաբնակչության համար նշում են տարբեր թվեր՝ 431 հազարից մինչև 700 հազար մարդ: Մեզ հավանական է թվում պրոֆ. Ս. Կակաբա-

---

6 գ. ხ ა ჭ ა პ უ რ ი ძ ე, რუსეთთან საქართველოს შეერთების ისტორიული მნიშვნელობა. თბილისი, 1955, გვ. 18.

7 ს. ჯაჯაბაძე. საქართველოს ისტორია, თბილისი, 1922, გვ. 228, 241.

8 Տե՛ս А. Ц а г а р е л и. Грамоты... Т. I, с. 191. Տե՛ս նաև Ø. ալექსիშვილი, რუსეთ-საქართველოს ისტორიული ურთიერთობის საკითხისათვის, თბილისი, 1956, გვ. 32–33.

9 საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. IV, თბ., 1973, გვ. 519.

10 Ա. Ե ր ի ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 139–140:

ձեի կարծիքը, ճշմարտությանն ավելի մոտ են կանգնած նաև Ֆ. Մախարաձեն և Գ. Խաչապուրիձեն, քանի որ վերջիններիս հաշվարկումները խարսխված են վերը քանիցս հիշատակված 1770 թ. ապրիլի 5-ի գեմոգրաֆիկ ցուցակի տվյալների վրա, որոնք համեմատաբար լրիվ են և ամբողջական: Այսպիսով, եթե Վրաստանի ամբողջ ազգաբնակչությունը 400–500 հազար մարդ էր, ապա միայն Արևելյան Վրաստանում բնակվող 27–28 հազար հայ ազգաբնակչությունը, առանց Արևմտյան Վրաստանի և Արևելյան Հայաստանի Ղազախ-Շամշադին, Փամբակ, Տաշիր, Աշոցք գավառների հայ ազգաբնակչության, որոնք XVIII դարում մտնում էին Քարթլ-Կախեթի թագավորության սահմանների մեջ, կկազմեր ողջ Վրաստանի ազգաբնակչության մոտ 10 տոկոսը, բայց ոչ ամենևին 2 տոկոսը, ինչպես կարծում է Գ. Մայսուրաձեն, որը գրում է. «Նշված պարագաների հետևանքով Վրաստանի հայ բնակչությունն ուսումնասիրվող ժամանակաշրջանում էլ ավելի աճեց: Մեր հաշվումներով XVII–XVIII դարերում նրանք կազմում էին ազգաբնակչության 2 տոկոսը, մենք օգտագործել ենք Վրաստանի բնակչության XVIII դարի մարդահամարի նյութերը, ինչպես նաև ռուսական պաշտոնական վիճակագրության տվյալները»[11]: Նախ նկատենք, որ ռուսական պաշտոնական վիճակագրությունը XVIII դարում Վրաստանում բնակվող հայերի մասին տվյալներ չունի. կան կապիտան Յազիկովի և Ռ. Մոուրավովի 1770 թ. ապրիլի 5-ի նշված ցուցակի ներկայացրած տվյալները, որոնք ամենևին էլ ռուսական պաշտոնական վիճակագրության տվյալներ չեն, այլ Արևելյան Վրաստանում 1767–1768 թվականին անցկացված մարդահամարի տվյալներից վերցված քաղվածքներ՝ ռուսական արքունիք ներկայացնելու նպատակով[12]: Վերը բերված տարբեր աղբյուրների տվյալները հիմք են տալիս չհամաձայնելու Գ. Մայսուրաձեի նշված կարծիքի հետ: Ավելորդ չենք համարում բերել պրոֆ. Դ. Ալլենի կարծիքը Քարթլ-Կախեթի թագավորության ազգաբնակչության մասին. «Երեք ժողովուրդների բնական կենտրոնը Թիֆլիսն էր, քաղաք, որ ավելի շատ հայկական էր, նույնքան՝ ադրբեջանական, որքան և վրացական: Իսկ ամբողջ տերության մեջ երեք ժողովուրդների քանակական հարաբերակցությունը գրեթե հավասարակշռված էր»[13]: Ինչ վերաբերում է քաղաքային բնակչությանը, ապա նույն հեղինակը գրում է. «Մայրաքաղաքի, Գորիի, Ալիի, Առրամի բնակչության մեծ մասը հայեր էին»[14]: «Հերակլի տերությունը, ըստ էության, իր ազգային կազմով կովկասյան պետություն էր»[15]: Սակայն հարցը միայն թվական կազմը չէ, գլխավորն այն է, որ կազմելով քաղաքային ազգաբնակչության հիմնական մասը, հայերը, որպես այդպիսին, թագավորական կենտրոնական իշխանության հուսալի հենարանն էին: Իրավացի է անշուշտ Գ. Մայսուրաձեն, երբ նշում է.

---

11 Г. Я. Майсурадзе. Из истории взаимоотношений грузинского и армянского народов в XVII–XVIII веках.– Автореф. дисс., представленной на соискание ученой степени канд. ист. наук, Тбилиси, 1970, с. 26.

12 «მაცნე», 1973, №1, გვ. 149.

13 W. E. D. Allen. A History of the Georgian people. London. 1932, p. 205.

14 *Նույն տեղում, էջ 204:* Ш. Чхетия. Армяне в Тбилиси в шестидесятых годах XIX века.–*«Պատմա-բանասիրական հանդես», 1958, №3, էջ 162:*

15 W. E. D. Allen. *Նշվ. աշխ., էջ 204:*

«Վրաց քաղաքների բնակչության մյուս մասի հետ միասին հայ բնակչության առևտրաարհեստավորական խավը նույնպես շահագրգռված էր կենտրոնացված ուժեղ պետություն ունենալու մեջ, և ներգասակարգային պայքարում այն հանդես էր գալիս թագավորի և կենտրոնաձիգ ուժերի կողմից, շնորհիվ որի նպաստում էր վրաց պետականության ամրապնդմանը»[16]*: Այդպիսին էր քաղաքային բնակչության սոցիալ-քաղաքական դերը ավատատիրության շրջանում ինչպես այլուր, այնպես էլ Վրաստանում: Կազմելով քաղաքային ազգաբնակչության հիմնական մասը, հայերը ոչ միայն առևտրի և արհեստների բնագավառում էին նշանակալից դեր խաղում, հայ ազնվականության ներկայացուցիչները արքունի առաջնակարգ պաշտոններ էին վարում: Այս առթիվ բերենք պրոֆ. Ա. Ս. Խախանովի կարծիքը. «Թերթելով Վրաստանի տարեգրության էջերը, մենք հավաստիորեն իրազեկ ենք դառնում, որ վրաց թագավորները երբեք խտրականություն չէին դնում վրացիների և հայերի միջև, վերջիններիս տրամադրելով խղճի լիակատար ազատություն և լիակատար քաղաքական և քաղաքացիական իրավունքներ»*[17]*: Վրաստանում, իրոք, թագավորական իշխանության կողմից երբեք գոյություն չեն ունեցել կրոնական և ազգային սահմանափակումներ հայերի նկատմամբ, որի շնորհիվ հայերը բնակվել են վրացիների հետ կողք կողքի և հաշտ ու համերաշխ, առանց առանձնանալու երկրի բնիկ ազգաբնակչությունից*[18]*:*

ЧИСЛО АРМЯН В ГРУЗИИ В XVIII ВЕКЕ

ВАГРАМ МАРТИРОСЯН

Резюме

На основании демографического списка от 1770 года число жителей в Грузии составляло 400—500 тысяч человек, а число армян Восточной Грузии — 27—28 тысяч человек, не считая армян Западной Грузии и Казах-Шамшадинского, Памбакского, Ашоцского гаваров Восточной Армении, входивших тогда в состав царства Картли-Кахетии. В совокупности армяне тогда составляли около 10 процентов всего населения Грузии.

16 Г. Я. Майсурадзе. *Նշվ. աշխ., էջ 27:*
17 *Տե՛ս,* А. С. Хаханов. *Նշվ. աշխ., էջ 661:*
18 Г. Я. Майсурадзе. *Նշվ. աշխ., էջ 25:*